Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման համար վարձակալության տրամադրելու մասին որոշման նախագծի

Որոշման ընդունումը բխում է << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջից, համաձայն որի համայնքի ավագանին համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքային սեփականություն հանդիսացող գույքը վարձակալության տրամադրելու մասին:

Ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է << Բեսթ Մայնինգ >> ՍՊԸ-ին երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման համար վարձակալությամբ տրամադրել համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության ընդհանուր 14,4589 հա մակերեսով հողամասերը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության տրամադրելու մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

<<Բեսթ Մայնինգ>> ՍՊԸ-ին համայնքային սեփականություն հանդիսացող 14,4589 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության 15 միավոր հողամասերը երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման համար վարձակալության հանձնելու որոշումը համայնքի բյուջեում ենթադրում է 3614725 դրամ եկամուտների ավելացում:

Աշխատակազմի բնապահպանության, գյուղատնտեսության և հողաշինության բաժնի պետ՝ **Բ.Թադևոսյան**